

# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran  
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts  
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their  
gratitude to “JTI ARMENIA” CJSC  
for sponsoring the publication of this volume

**Մատենադարան**  
**Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և**  
**«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը**  
**երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին**  
**սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար**



MATENADARAN  
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**BULLETIN OF MATENADARAN**  
**34**

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**  
**34**

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**34**

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան  
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Ս. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 34, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի  
ին-տ. Երևան, 2022: 448 էջ (ներդիր 8 էջ):*

*«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են  
պատմությունը, բանասիրությունը, արվեստին նվիրված հոդվածներ և այլ նյութեր:*

**ԱՍԱՐ ՍԵՔԱՍՏԱՑՈՒ «ԳԻՐՔ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԻ»  
ԲԺՇԿԱՐԱՆԻ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**

**Բանալի բառեր՝** Ասար Սեքաստացի, Մխիթար Հերացի, «Գագիկ-Հեթումյան» բժշկարան, Ահարոն բժշկապետ, Ստեփանոս բժիշկ, Ամիրդովլաթ Ամասիացի, «Օգուտ բժշկութեան», սկզբնաղբյուր, զուգահիշ համեմատություն, քաղումներ:

Ժէ դարի սեքաստացայ բժիշկ Ասարի բազմաժանր մատենագրական ժառանգության մեջ առանձնակի արժեք ունի «Գիրք բժշկական արհեստի» երկը, որի գիտահամեմատական՝ քննական բնագիրը բժշկագիտական վերլուծությամբ հրատարակվել է մեր կողմից<sup>1</sup>:

Խնդրո առարկա գիրքը հայ միջնադարյան բժշկական մատենագրության մեջ, փաստորեն, մեզ հայտնի երրորդ հեղինակային բժշկարանն է՝ հայ բժշկապետներ Մխիթար Հերացու (ԺԲ դար) և Ամիրդովլաթ Ամասիացու (ԺԵ դար) բժշկարաններից հետո: Այդքանով իսկ առաջնային է դառնում աշխատության գրավոր աղբյուրների բացահայտումն ու գիտական շրջանառության մեջ դնելը: Ոչ միայն այդ. աղբյուրների (առավել ևս միջնադարյան մատենագրության) վերլուծությունը հաճախ հուշում է դեռևս անհայտ և նոր սկզբնաղբյուրների գոյությունը, ինչը հնարավորություն է ընձեռում ավելի ստույգ ու որոշակի բնութագրելու միջնադարյան հայ բժշկական մատենագիր ժառանգության ամբողջական ուրվագիծը:

Արդ՝ բնագրերի զուգահերությունը կանգրադառնանք այն գրավոր աղբյուրներին, որոնք մեր հեղինակին ուղեցույց են դարձել բժշկարանը գրելիս: Այն իրողությունը, որ խնդրո առարկա բժշկարանը չի ամփոփում բժշկության մի առանձին տարբերակված բնագավառ, հուշում է, որ հեղինակը ձեռքի տակ պետք է ունենար բժշկության տարբեր ոլորտների առնչվող երկեր: Իրոք՝ Ասարի բժշկարանը հիմնականում կառուցված է քաղումներից, և ուշագրավն այն է, որ դրանց մեջ չկա ժամանակագրական, ոճային, տեքստային և այլ միակերպու-

\* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, բժշկ.գ.թ., հոդվածը ներկայացնելու օրը՝ սեպտեմբերի 27, 2022, գրախոսելու օրը՝ նոյեմբերի 15, 2022:

<sup>1</sup> Ասար Սեքաստացի, Գիրք բժշկական արհեստի, աշխ. Դ. Մ. Կարապետյանի, Երևան, 1993:

թյուն. որոշ քաղումներ պահպանված են անփոփոխ, անաղարտ, ինչպես դրանց աղբյուրում, մեկ այլ դեպքում տեսնում ենք նվազ փոփոխություն ենթարկված և վերջապես՝ բոլորովին փոփոխված հատակտորներ: Ի դեպ՝ Ասարն այդ քաղումները վարպետություններ հյուսել է իր տեքստին, դրանով իսկ ավելի լիարժեք դարձնելով արժարժավող բժշկական հարցադրումները:

Հիմք ընդունելով աղբյուրների քննություն ժամանակագրական մոտեցումը, նշենք մեր հնագույն հայերեն «Գագիկ-Հեթումյան» բժշկարանից<sup>2</sup> ծավալուն փոխառությունները: Այն իրողությունը, որ Ասարի բժշկարանում առկա են մեր հնագույն հայերեն բժշկարանից բառացի քաղումներ (ոչ միայն կարճ գրությունների, այլև ամբողջ պարբերությունների և ավելի ընդարձակ հատվածների տեսքով), փաստում է, որ Ասարն իր բժշկարանը գրելիս ձեռքի տակ ունեցել է «մայր բժշկարանի» բնագիրը: Ի հավաստումը դրա ներկայացնենք «Գիրք բժշկական արհեստի» գործի և «Գագիկ-Հեթումյան» բժշկարանի «Վասն աչացալութեան» համանուն գլխից հատվածներ՝ զուգադիր համեմատություններով:

Գիրք բժշկական արհեստի<sup>3</sup>  
«Վասն աչացալութեան»

Գագիկ-Հեթումյան բժշկարան  
«Վասն ամենայն ցեղ  
աչացալութեան»

...Ապա թէ մարդոյ աչն կծա և  
ֆորի և երբ վաղվնէն ի ֆնոյն զարթի,  
ըստ աչն ջուր գայ՝ նա ի յառաջի  
դեղեղ որ գրած է, յաչն դիր ի ժմոյն  
որ օգտէ:

...Ապա եթէ մարդոյն աչն կծա և  
ֆորէ, և յայգէն երբ ի ֆնոյն զարթնի,  
ընդ աչն ջուր գայ, ի յայտ դեղետ, որ  
յառաջիտ գրած է, դիր ի յաչն ժմուն  
աւգուտ է: (Եղմ. 370, թ. 213ա)

<sup>2</sup> Վերոնշյալ իրողությանը ժամանակին անդրադարձել է մխիթարյան ֆաշահմուտ բանասեր Ղ. Հովնանյանն, ում առավելապես հետաքրքրում էր միջնադարյան ուսմկագիր մատենագրությունը և որի ուսումնասիրության համար, ըստ Հովնանյանի, անփոխարինելի աղբյուրներ էին միջնադարյան բժշկարաններն իրենց ուսմկագիր լեզվապաշարով: Վկայակոչելով Մխիթար բժշկապետի խոսքերը՝ թէ ինչո՞ւ նա իր բժշկարանը գրեց «ոսմկօրէն» («Արարի գաա գեղոյկ և արձակ բարբառով, զի դիրահաս լիցի ամենայն ընթերցողաց») և զարգացնելով այս միտքը, Հովնանյանը գրում է. «Միջնադարյան ուսմկագիր բժշկական մատյանները ոչ միայն նոխացրին ոսմկօրէն մատենագրությունը, այլև դյուրահաս դարձրին աշխարհիկ լեզուն ընթերցողների համար» (տե՛ս Ղ. **Յովնանեան**, *Հետազոտութիւնք նախնեաց ոսմկօրէնի վրայ*, մասն առաջին, Վիեննա, 1897, էջ 54-55, 71, 85-86): Այս հայեցմամբ Ղ. Հովնանյանի համար արժեքավոր աղբյուր է հանդիսացել նաև Ասարի բժշկարանը, որը հարուստ նյութ է պարունակում միջնադարյան ուսմկօրէն լեզվի ֆննության և հայ աշխարհիկ լեզվի զարգացման պատմության ուսումնասիրության տեսանկյունից (տե՛ս Ղ. Հովնանեան, նշվ. աշխ., տետր Բ, էջ 461-466):

<sup>3</sup> Մեջբերված հատվածները բացակայում են Մաշտոցյան Մատենադարանի «Գիրք բժշկական արհեստի» բժշկարանի մեր ձեռքի տակ եղած ձեռագիր օրինակներում և պահպանվել են միայն Վիեն. 287 ձեռագիր բժշկարանում. օգտվել ենք վերջինիս թվայնացված օրինակից:

Այլ որ մարդոյ կծա և բորի և ջուրն երթայ, եգէն ինչ ի բնոյ առնէ այս դեղովս շուտ լաւնայ:

(Վիեն. 287, թ. 50ա)

...Այլ դեղ, որ աչաց տափութիւնն հովացնէ: Առ սպիտակ դեղ Բ. դրամ և ֆիթրայ Ա. դրամ, աղա և ի շոյ չորացոյ, երբ պիտենայ և մաղէ բարակ և ձուի սպիտակցով շաղուէ և կլօրնի արայ և ի շոյ չորացոյ, երբ պիտենայ աղչնկան մօր կաթեամբն և կամ վարդի ջրով տրորէ և դիր ի յաչն:

(թ. 50ա-50բ)

...Այլ դեղ աչացալի և իւր անունն տանկերեն ըռամատ ասեն և իւր նշանն այն է, որ աչն խառնակի և արիւնով լնվի և հանց թվենայ մարդոյն թէ աչն մոխրով և աւագով ի լնի է և գաչն բանալ շկարէ և արտատուփն գնայ:

Բայց դու յառաջն երակ կտրէ գլխիֆալն և կամ գնակտեկ երեակն և գայն լոծման դեղն տուր, որ գրած է յառաջդ վասն աչացալի համար:

Եւ ապա գուգէ գայս դեղս և յաչն դիր: Առ այրած պղինձ Գ. դրամ և ոսկոյ դլիմեայ Ա. դրամ և տանիկ կոէգ և աֆիոն և զաֆրան և սատէն հնդի Ա.Ա. դրամ, աղա և մաղէ յապրշմէն և անձրևի ջրով պլօրնի արա, երբ պիտենայ աղբրի ջրով տրորէ ի վրա խոլոզմկի և յաչն կաթեցոյ:

(էջ 50բ)

...Այլ նշանք, որ գաչն հովացնէ: Առ սպիտակ դեղ Բ. դրամ և ֆիթրա Ա. դրամ, գերկոսեանտ աղա մանդր և ապրիշմէ կտաւով մաղէ, և ձուի սպիտկուցով շաղաղէ և ճնունի արա և ի շոյ չորացոյ, և երբ պիտենա աղչան մաւր կաթամբ կամ վարդի ջրով տրորէ և յաչն դիր և աւգնէ:

(թ. 213ա)

...Այլ դեղ աչացալի և իւր անուն տանկերէն ռամաս ասեն: Եւ իւր նշանն այս է, որ աչն խառնակի և արոյնով լնվի և յանց թուենայ մարդոյն թէ աչն մոխրով և աւագով ի լի է և գաչն բանալ շկարէ և արտատուփն գնա: Ապա այտ ցաւուտ յառաջ երակ կտրէ գլեֆալն և կամ գնակտին երակն և գայն լուծման դեղն տուր, որ յառաջն գրած է աչաց ցաւոյ համար: (թ. 214բ-215ա)

Եւ գայս դեղս արա և յաչն դիր. առ այրած պղինձ Գ. դրամ և ոսկոյ ակլիմիա, որ է աղտն Ա. դրամ, տանիկ կոէգ և աբիոն և զաֆրան և սատէն հնտի ամեն մեկէ Ա. դրամ, գամէնտ յիրար խառնէ և մանդր աղա և ապրիշմէ կտաւով մաղէ և անձրևաջրով շաղաղէ և պլարնի արա և շֆի չորացոյ և երբ պիտենայ աղբրի ջրով տրորէ և ի վերա խոլոզմկի և յաչն կաթեցոյ և աւգնէ:

(թ. 214բ-215ա)



Նմանօրինակ զուգադրումներն էլ ավելի համոզիչ են դարձնում, որ Ասարի հեղինակային բժշկարանում առկա մի շարք քաղումները փոխառված են այլ բժշկական գործերից: Իրոք՝ Ասարի բժշկարանի քաղումներն իրենց ոչ միջնորդավորված բնույթը (որը, մեր համոզմամբ նրա աշխատության կարևոր արժանիքն է) հավաստում է Ասարի գործի և Մխիթար Հերացու ու Ամիրդովլաթ Ամասիացու բժշկական երկերի համանուն գլուխների համեմատությունը, ի մասնավորի՝ Ասարի բժշկարանում առկա են մեր առաջին՝ «Գագիկ-Հեթումյան» բժշկարանից բառացի ներառված հատվածներ, որոնք բացակայում են Մխիթարի և Ամիրդովլաթի բժշկարանների նույնաբովանդակ գլուխներում:

Բերենք «Գագիկ-Հեթումյան» բժշկարանից Ասարի բժշկարան ներառված ներկա հատվածի (որը բացակայում է Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» երկի նույնաբովանդակ «Որ քուն չունի և վասվաս որ է տքնութիւն» գլուխը) զուգադրի համեմատությունը:

Ասար Սեբաստացի  
«Վասն տֆնութեան»

Գագիկ-Հեթումյան բժշկարան  
«Վասն թէ հիւանդին տֆնութիւն  
դիպի»

...Ապա թէ տֆնութիւն ի յողջնութիւն լինի՝ զայս ջուրս զուգէ և զգլխովն չափէ. առ չոր մանիշակ Ե. դրամ և նոնֆարի ծաղիկ չոր թէ դալար Ժ. դրամ, հագրի հունդ Ե. դրամ, գարոյ կորկոտ Ժ. դրամ, զամէնդ ի պղինձ արկ և ի վերայ ջուր Ժ. լիտր և եփէ, որ մնայ Զ. լինտր և զայտ ջուրտ եղկ զգլխովն չափէ վաղն և երիկունն և պահէ զջուրտ և ամէն օր եղկոյ և հանց արա: Եւ թէ շիւնի յօգտել, ի յայտ ջուրտ խառնէ այծու կաթն և այնց չափ զգլխովն և օգտէ:

(թ. 68ա)

...Ապա թէ տֆնութիւնն ի յողջնութիւնն լինի, զայս ջրես զուգէ և զգլխովն չափէ. առ չոր մանիշակ Ե. դրամ և նինիֆարի ծաղիկ թէ չոր լինի և թէ դալար Ժ. դրամ, իրիցուկ եթե չոր է Ե. դրամ և թէ դալար Ժ. դրամ, հագրի հունդ Ե. դրամ, գարեկորկոտ Ժ. դրամ, զամէնտ ի պղինձ արկ և ի վերայ Ժ. լիտր ջուր և եփէ, որ մնայ Զ. լիտր և զայտ եղկ ջրով զգլխովն չափէ վաղն և յիւրիկունն և պահէ զջուրտ և ամենայն ատուր եղգացոյ և հայնց արայ: Եւ թէ շիւնի յաւգտելի, ի յայտ ջուրտ այծու կաթն խառնէ և յայնց չափէ զգլխովն և օգտէ Աստծով:

(թ. 329ա-բ)

Վերոբերյալը Ասարի բժշկարանում հնագույն հայերեն բժշկական աշխատություններից անմիջականորեն մեջբերված միակ օրինակը չէ. բժշկարանի «ՀԶ»՝ «Վասն այն ցաւոյն, որ գերեսօքն լինի մարդն» վերտառութեամբ գլխում<sup>4</sup>, որն Ասարը սկսում է Մխիթար բժշկապետի անվան հիշատակմամբ («Այլ ես Մխիթարս յիշեմ կարճառօտ՝ եթէ ուստից լինի երեսօքն և կամ նուզլան») և ավարտում կրկին նրա անվան հիշատակմամբ («...եւ զայլ ըստածուամն գտանես ի գիրս Մխիթար բժշկին՝ Աստծով»), կա մի ընդարձակ հատված, որի՝ Հերացի բժշկապետի գրչին պատկանելը կասկածելի է թվացել Ղ. Հովնանյանին: Հմուտ բանասերի համոզմամբ այս պատառիկի բառամթերքը ավելի հատուկ է «Գագիկ-Հեթումյան» բժշկարանին և ամենայն հավանականութեամբ Ասարն այն շարադրել է «մայր հեքիմարանից» փոխառութեամբ<sup>5</sup>:

Արդ՝ այդ հատվածը. «Եւ թէ այն, որ ընդ քիթն ի գնալ լինի և նեղու, և ուզես որ կտրես՝ ծխէ ի ներքև քթացն խունկ սանդարօս, գրած քարտէզ, և որչափ կարես՝ մի կտրել զայն որ ի քթացն լինի գնալ, ինչուր ի կուրծքն լինի իշել: Ապա թէ ի փողքն շորանայ՝ երակ կտրէ զկիֆալն: Եւ թէ փորն կապ լինի՝ կակղացոյ մտպուխով: Ապա երբ գերակն կտրես և մտպուխով կակղացնես և չաշի և նուզլան ի կուրծքն իջանէ և հազ գայ, դու շտապէ և այլ պատրաստեցոյ, և սնուցած մանիշակ տուր, որչափ հազն լինի ի գալ, և խոշորութիւն լինի և փողքն և ի կուրծքն, մինչ որ այդից յաշի և խօխ գայ՝ պղղամ»<sup>6</sup>: Ի դեպ՝ այս նույն գլխում կա մի հիշատակություն. «Ասաց Տէր Բարդողիմեոսն ի Հըռոմ քաղաքն՝ եթէ դիժար հիվանդ էր և ջերմնոտ, գինով լոկցուցին և հալիմայ ապուր կերցուցին, պառկեցայ և քրտնեցայ և լավցայ ողորութեամբն Աստուծոյ»<sup>7</sup>, որը Հովնանյանի համոզմամբ Ասարը փոխառել է մեկ այլ հնագույն բժշկական սկզբնաղբյուրից:

Եվ վերջապես, Ասարի բժշկարանի «Վասն զայն ցաւոյն, որ գերեսօքն լինի» գլխում Հերացու անվամբ հիշատակված պատառիկի առկայությունը ավելի համոզիչ է դարձնում հայ բժշկագիտության պատմության տեսության մեջ շրջանառվող այն տեսակետը, որ Հերացին իր «Ջերմանց մխիթարութիւն» գլուխգործոցից բացի, հավանական է, ունեցել է այլ բժշկագիտական ստեղծագործություններ: Իրոք՝ մեր կողմից շրջանառության մեջ դրված Ասարի բժշկարանի վերոնշյալ պատառիկի առկայությունը գալիս է հավաստելու հիշյալ տեսակետի հավանականությունը<sup>8</sup>: Տարակուսելի է, որ Հերացին՝ գիտության այդ տաղան-

<sup>4</sup> Այն առկա է միայն Վիեն. 287 ձեռագրում՝ ք. 66ա-67բ:

<sup>5</sup> Տե՛ս Ղ. Հովնանյան, նշվ. աշխ., էջ 464-465:

<sup>6</sup> Վիեն. 287, ք. 66բ:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>8</sup> Այդ մասին հանգամանորեն տե՛ս Գ. Կարապետյան, «Նոր պատառիկ Մխիթար Հեռացու անհայտ աշխատությունից», *Журнал экспериментальной и клинической медицины*,

դավոր ներկայացուցիչը, բժշկական լայն գիտելիքներով ու գիտական վերլուծություններ օժտված գիտնականը, սահմանափակվեր միայն մեկ բժշկարանի շարադրմամբ:

Հատկանշական են Ասարի՝ Հերացու «Ջերմանց մխիթարություն»-ից մեջբերված ուղղակի քաղումները՝ տե՛ս «Գիրք բժշկական արհեստի» գրքի «ԼԶ»՝ «Պատմություն նախագիտութեան վասն ծաղկին ջերմանն» և «ԼԷ»՝ «Վասն ստածման և բժշկութեան այն ջերմանն, որ զկնի ծաղկին լինի» գլուխների զուգադիր համեմատությունը «Ջերմանց մխիթարություն» «ԻԷ»՝ «Վասն ստածման և բժշկութեան, այն ջերմանն, որ զկնի ծաղկին լինի» գլխի հետ<sup>9</sup>:

Գիրք բժշկական արհեստի  
«Պատմություն նախագիտութեան  
վասն ծաղկին ջերմանն»

Ջերմանց մխիթարություն  
«Վասն ստածման և բժշկութեան  
այն ջերմանն, որ զկնի ծաղկին  
լինի»

Եհաննայ ասէ, թէ պատճառն այն արեանն յաւելածն լինի, որ մանուկն յորովայնի մօրն կերակրի: Եւ այն արինն կանացի սնէ, որ յամենայն մարմնոյ յստկի և սրբի, և ապա կերակրէ զմանուկն ընդ պորտն:

Եւ իւր նշանն այն է՝ որ ջերմանայ խիստ առանց դողալոյ, երեւ օր և երեւ գիշեր ի հար լինի իւր տափութիւն առանց պակասելոյ և մէջն և ողնաշարն ցաւէ:

Ապունէրինն ասէ. թէ իւր պատճառն յառաւել և ի գէշ յարենէ լինի,

Էհաննայ ասէ՝ թէ իւր պատճառն այն արեանն յաւելածն լինի, որ մանուկն յորովայնի մարն կերակրի, և այն արինն կանացի սնէ, որ ի յամենայն մարմնոյն յիստակի և սրբի, և ապա կերակրէ զմանուկն ընդ պորտն:

Եւ իւր նշանն այն է, որ ջերմանայ խիստ, առանց դողալոյ, երեւ ար և երեւ գիշեր ի հար լինի իւր տափութիւնն առանց պակասելոյ և մէջն և ողնաշարն ցաւի:

Ապունէրինն ասէ՝ թէ իւր պատճառն յառաւել տափ և ի գէն արենէն

*AH Арм ССР, Ереван, 1976, № 6, с. 103-109; նաև՝ Ասար Սերաստացի, Գիրք բժշկական արհեստի, էջ 49-58:*

<sup>9</sup> «Գիրք բժշկական արհեստի» գրքի «ԼԶ» և «ԼԷ» գլուխները կան միայն Վիեն. 287 ձեռագիր բժշկարանում, որից և օգտվել ենք, իսկ «Ջերմանց մխիթարություն» երկի ՄՄ 416 ձեռագիր մատյանի «ԻԷ»՝ «Վասն ստածման և բժշկութեան այն ջերմանն, որ զկնի ծաղկին լինի» գլուխը 1832 թ. հրատարակված «Ջերմանց մխիթարություն» գրքում (որի հիմքը Փրգ. 246 ձեռագիրն է) «ԻԸ» գլուխն է՝ «Պատմություն և նախագիտություն վասն ջերմանն, որ զկնի ծաղկին լինի» վերտառությամբ: Մենք օգտվել ենք ՄՄ 416 ձեռագիր բժշկարանից:

որ մարմնոյն յաղթէ, և իւր նշանն այն է, որ երեսացն գոյնն կարմիր լինի և աչացն, և գլուխն ծանրանայ: Երբ այս նշաննիս երևնայ՝ գիտացիր որ ծաղիկ կամի ելանել:

(Վիեն. 287, թ. 30բ)

«Վասն ստածման և բժշկութեան այն ջերմանն, որ զկնի ծաղկին լինի»

Յորժամ յիմանաս որ ծաղիկ կամի ելանել ի մարդն, յառաջ քան զամենայն իսկիզբն երակ առ ի կիֆալն կամ ի բասիլիկէն և արիւն թող ըստ ուժոյն: Ապա եթէ յառաջ ծաղիկն յերևան գայ, երակ չէ պատեն առնուլ, զի շատ ահուկէ: Ապա զկնի ծաղկին երևելոյն՝ գարէջուր տուր, որ յունապով լինի եփած և փերեռկած ոսքամբ: Եւ սիթքընէպին գուգէ ծեծած խիարի հնդով և եղրդակի հնդով, և գայն տուր խմելոյ:

Ապա թէ չկարէ առնուլ, ի գարէջրէն և հով իրաց պատրաստ պահէ, և գայս դեղս տուր որ եփէ և զծաղիկն ի դուրս գարնէ և հանէ: Առ փերեռկած ոսքն տասն դրամ և՛ քիթրայ հինգ դրամ, բաղեղան հունդ երեք դրամ, զիրենդ ի պտուկ մի արկ և ի վրա ջուր ան լիտր կէս և եփէ, որ յերիցն մէկ մնայ և քամէ, ապա խառնէ յինքն սակաւ մի եղ և տուր, որ խմէ:

Եւ կամ առ բաղեղան ջուր և քան-

լինի, որ մարմնոյն յաղթէ:

Իւր նշանն այս է, որ երեսացն գոյնն կարմիր լինի և աչացն, և գլուխն ծանրանա և պինչսն ցնեքս քորին և կծան և փոնկառոյ գայ և ամենայն մարմինն լիանայ: Ապա երբ այս նշաննիս երևան՝ գիտացիր որ ծաղիկ կամի հանել:

(ՄՄ 416, թ. 68ա, 68բ)

Եւ իւր ստածումն այս է: Որ ի սկզբանն երակ առնուն և արոյն թողուն՝ ըստ ուժոյն: Ապա թէ յառաջ քան զերակ առնուլն ծաղիկն յերևան գա՝ երակ չէ պատեն առնուլ, զի ահուկէ շատ:

Ապա զկնի ծաղկին երևելոյն՝ գարէջուր տուր, զոր յունապով և փերեռկած ոսքնով եփած լինի: Եւ սֆնեպին, զոր ծեծած խիարի հնդով և եղրդական հընդով և սամիթի հընդով լինի եփած, ի բանի պահէ:

Ապա թէ երակ չկարէ առնուլ՝ ի գարէջրէն և ի հով իրաց պատրաստ կենա և գայն զդեղերն տանի ի բան՝ որ ծաղիկն ի դուրս հանեն և եփեն:

Այս նշանաւս՝ առ փերեռկած ոսքն տասն դրամակշիռ և քիթրայ հինգ դրամակշիռ, բաղիանի հունդ, որ է ոգիան երեք դրամակշեռ, գայս զամենս լիտրուկէս ջրով եփէ, մինչև ի յերիցն՝ մէկն մնա, քամէ և սակաւ մի իւլ յինքն խառնէ և տուր, ակտակար է:

Կամ առ բաղիանի ջուր և շն-

րավիզի ջուր և շնխաղողի ջուր՝ գամենդ յիբար խառնէ և արկ ի ներս շաֆար և տուր որ խմէ:

(Վիեն. 287, ք. 30բ-31ա)

Բայց քան զամենայն ինչ զքո առաջին ջանքն և զստածումն յաչքն արայ, որ չելանէ ծաղիկ և դիր յաչքն զայս դեղս: Առ աղտոր և վարդի ջրով և քաղցրով դրջէ և սակաւ մի մուգ նոսան ջուր խառնէ և դեղդրով յաչքն դիր:

(Վիեն. 287, ք. 31ա)

Այլ գիտացիր, որ ի յայս հիւանդութեանս ի սկիզբն մարդոյն խաֆաղան դիպի և սիրտն խառնի և ի հիւանդն տապի և շարժկոթի: Երբ զայս տեսանես ճար արայ, որ ըզծաղիկն շոյտ ի դուրս քաշես և հանես այսպէս. Առ ափ մի ոսքն լուացած և թուզ մի կտրտած, և եփէ ջրով և քամէ, և առ լուփ աղցած և մաղած Գ. դրամ և ի ներս խառնէ և տուր, որ խմէ: Եւ ի հիւանդութեան սկիզբն զքնութիւնն կակղացոյ թառանգպիւնով և դամոնով և ունապով:

Եւ հետ է. աւուրն պատրաստեցոյ որ չլուծանէ զքնութիւնն, զի այս հիւանդութիւնս ի ճարն ինքնին լուծէ զքնութիւնն, զի այն մնացորդն, որ ի ծաղկէն ի ներս մնայ և չելանէ ի դուրս, յետոյ լուծանէ զքնութիւնն:

խաղողի ջուր և շաֆար և սակաւ մի կարասի ջուր, զայս գամենս յիբար խառնէ և տուր ակտակար է:

(ՄՄ 416, ք. 68բ)

...Ապա երբ այս նշաննիս երևան, գիտացիր որ ծաղիկ կամի հանել: Ապա զքո գառաջին ջանքն և զստածումն յաչքն արայ որ չելանէ ծաղիկ և դիր յաչքն զայս դեղս: Առ աղտոր, վարդի ջրով և քաղցրով թրջէ և սակաւ մի մուգ նոսան ջուր խառնէ, զայս գամենս պարզե և դեղդրով ի յաչքն դիր:

(ՄՄ 416, ք. 66բ-67ա)

Այլ գիտացիր, որ այս հիւանդիս ի սկիզբն հիւանդութեանն խփական դիպի և սիրտն խառնկի և հիւանդն տապի և շաժակի: Ապա երբ զայս տեսանես՝ ճար արայ, որ ծաղիկն շոյտ ի դուրս քաշես ու հանես այս նշանաւս. առ ափ մի ոսքն լուացած և թուզ մի կտրտած, եփէ ջրով և քամէ, և առ լուփ աղացած և մաղած և երեք դրամ ի ներս խառնէ և տուր որ խմէ, և կերակուր՝ մաշ տուր, և ոսպն և դդում և զքնութիւնն կակղացոյ:

Բայց հիւանդութեանն ի սկիզբն դամոնով և յունապով և թառանկրիւնով, և այլ պատրաստեցոյ որ հետ եւթն աւուրն որ չլուծանես զքնութիւնն և այս հիւանդութիւնս ի վնարն ինքնին լուծանէ զքնութիւնն, զի այն մնացորդն, որ ծաղկէն ի ներս մնաց և չելաւ ի դուրս, յետոյ լուծանէ զքնութիւնն:

Ապա թէ լուծանէ՛ տուր սերկևիլ և տանձ և մուգ նուռն: Ապա թէ լուծումն պնդէ՛ տուր տապաշիրին խուրսն որ զուգած լինի թթրկնի հնդով և օգտէ:

(Վիեն. 287, թ. 31բ)

Եւ վարդն, որ հարսանիթէ ասեն և յաղուանից տունն փութէ ասեն, նոյնպէսն և իւր պատճառն արիւնն լինի, զերթ որ ծաղկին է: Բայց ծաղկին նիւթն և գլուխն հաստ լինի և զօրաւոր և հարսանիթային՝ այլ պարկեշտ և նօյսր և թեթև լինի և իւր ստածումն ամենայն դիմօփ, կամօփն Աստուծոյ:

(Վիեն. 287, թ. 32ա-32բ)

Ապա տուր սերկևիլ և տանձ և մուգ նուռն: Ապա թէ լուծումն պնդի, տուր զտապաշիրի կուրսն զոր թրթկնի հնդով զուգեն:

(ՄՄ 416, թ. 67ա-67բ)

Եւ վարդն՝ զոր հարսանիթէ ասեն, և աղանեաց տունն՝ փութէ, նոյնպէսն իւր պատճառն՝ արոյնն լինի զերդ որ ծաղկին է: Բայց ծաղկին գլուխն և նիւթին հաստ լինի և զաւրաւոր և վարդին այլ պարկեշտ և նաւսր և թեթև լինի և իւր ստածումն յար և ի մաւտ է ի ծաղիկն և ստածումն ամենայն դիմաւփ, ակտակար է թէ Աստուած կամի:

(ՄՄ 416, թ. 69ա-69բ)

*Շարունակելով Ասարի բժշկարանում առկա՝ սկզբնաղբյուրային արժեք ներկայացնող քաղումների վերոբերյալ մեր դիտարկումները, առնչվում ենք երկու դար Կիլիկյան Հայաստանում ստեղծագործած (12-14-րդ դարեր) Ահարոն բժշկապետի տոհմի շառավիղ Ստեփանոսի հեղինակած «Ծաղիկ» կոչվող բժշկարանից ուշագրավ պատառիկների հետ:*

*Հարկ է այդ արժեքավոր բժշկարանի մասին խոսել քիչ ավելի հանգամանորեն: «Ծաղիկ» բժշկարանը միայն 20-րդ դարասկզբին է հայտնաբերել Սեբաստիայի գավառներից մեկում, սեբաստահայ ուսուցիչ Կ. Գաբրիկյանը, ով երկար տարիներ զբաղվել է Սեբաստիայի և նրա շրջակա գավառների հայերեն ձեռագրերի հայտնաբերման և նկարագրման շնորհակալ գործով: Յավոք, բժշկարանի այդ միակ օրինակը հայ հոգևոր մշակույթի հազարավոր հուշարձանների թվում ոչնչացվել է հայկական եղեռնի տարիներին: Այդքանով իսկ՝ է՛լ ավելի են արժևորվում Ասարի բժշկարանում «Ծաղիկ» բժշկարանից քաղված պատառիկները, դառնալով նրա գոյության բնագրային ապացույցը:*

*Ըստ Գաբրիկյանի վերոհիշյալ ձեռագրային նկարագրության՝ «Ծաղիկ» բժշկարանը հեղինակել է Ահարոնի որդի Ստեփանոս բժիշկը: Մասնավորապես, այդ և բժշկարանի ստեղծման ստույգ թվականը (1232 թ.) նշվում է հիշատարականում. «Եւ ես Ստեփանոս մեղուցեալ ծառայ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ և իմ հարազատ եղբայր ճօշլին բժիշկ գրեցաք զինքս ի թվին Հայոց ՈԶԱ (1232) ի յօգտութիւն շատ բժշկաց և յառողջութիւն բազում հիւանդաց... Եւ*

ապայ ես Ստեփանոս մեղուցեալ ծառայ Աստուծոյ եւ նուաստ քահանայի որդի Ահարոնի բժշկապետին եթեսացոյ, որ թարգմանի Ուռնայ, սակաւիկ մի զոր ես էի արարեալ եւ օգտել էր փորձիւ բազմաց, զոր իմ հօրէն էի ուսել եւ ի Մխիթար եւ ի Սիմէօն բժիշկէն խօսք սակաւ եդի յայս գրունքս վասն օգտութեան մարդկան...<sup>10</sup>:

Ընդհանրապէս, Կիլիկյան Հայաստանում ժԲ-ժԴ դարերում ստեղծագործած Ահարոն բժշկապետի և նրա տոհմի (Ստեփանոս, Ճոշլին, Սարգիս, Դեղին, Սիմաւոն) բժշկական ժառանգությունը միջնադարյան հայ բժշկագիտութեան մեջ կարևոր նշանակություն ունի, քանզի փաստում է ժԲ-ժԴ դարերի հայ բժշկագիտական մտքի անընդմեջ շարունակականությունը:

Ահարոն բժշկապետի տոհմի մասին առաջին ստույգ վկայությունն ունենք Ամիրզոլլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ» դեղաբառարանի առաջաբանում, որտեղ նա թվարկում է իրենից առաջ ստեղծագործած հայ բժիշկներին, ի թիվս որոնց՝ Ահարոն, Ստեփանոս, Ճոշլին, Սարգիս, Դեղին, Սիմաւոն բժիշկներին. «... եւ ի յայս բանից առին առաջին բժշկապետքն մեր՝ Մեծն Մխիթար բժիշկն, եւ Ահարոն բժիշկն, եւ որդի նորա Ստեփանոս բժիշկն, եւ տոհմն նոցա՝ Ճոշլին բժիշկն, եւ Սարգիս բժիշկն եւ Դեղին բժիշկն, եւ Սիմաւոն բժիշկն, եւ Վահրամ բժիշկն, որ շատ գրեանք շիներ էին վասն դեղերուն զարուսթեանն եւ ազատութեանն»<sup>11</sup>:

«Ծաղիկ» բժշկարանի հեղինակի՝ Ստեփանոսի, մասին նաև մի այլ հետաքրքիր տեղեկություն է պարունակում Վիենն. 624 ձեռագիր բժշկարանը, ուր Ստեփանոսի անունով մի դեղատոմսի մեջ հիշատակություն կա այն մասին, որ նա ապրել է Կիպրոս կղզում, Տարսոն քաղաքում և շատ ուրիշ քաղաքներում՝ ամենուր օգտագործելով իր բժշկական փորձը. «Այլ դեղ Ստեփանոսի նուաստի զուգած, որ արարի ի վերայ յայս ցաւուս եւ օգտեաց բազմեց Աստուծով: Ի Կիպրոս կղզուոջն եւ ի Տարսուն եւ այլ բազում քաղաքս...»<sup>12</sup>: Եվ ահա Ահարոնի տոհմի բժիշկներից Ստեփանոսի «Ծաղիկ» բժշկարանին առնչվող հաջորդ վկայությունները՝ մեր քննության առարկա Ասար Սեբաստացու բժշկարանի քաղումներում:

Ասարի բժշկարանում առկա քաղումներից առաջինը վերաբերում է «Վասն փոշտանկի, որ է ձուանկն: Եւ գրէ Ըստեփանոս բժիշկն, թէ իմ հայրն Ահարոն բժիշկն ուսոյց զայս ինձ, որ այլ զորաւոր է, քան զառաջինդ»<sup>13</sup> վերտառութեամբ

<sup>10</sup> Տե՛ս Սիոն, փետրվար, 1953, էջ 46-47, նաև՝ Կ. Գաբրիելան, Հայ բուսաշխարհ, Երուսաղեմ, 1968, էջ ԻԳ-ԻԵ: Ի դեպ այն փաստը, որ «Ծաղիկ» բժշկարանը հայտնաբերվել է Սեբաստիայում, առիթ է տալիս կարծելու, որ այն կարող էր լինել Ասար Սեբաստացու ձեռքի տակ:

<sup>11</sup> Ամիրզոլլաթ Ամասիացի, Անգիտաց անպէտ, Վիեննա, 1926, էջ 2:

<sup>12</sup> Հ. Ոսկեան, Յուդակ հայերէն ձեռագրաց ի Վիեննա, Վիեննա, 1963, էջ 105:

<sup>13</sup> ՄՄ 7749, էջ 55բ-56ա:

աճուկափոշտային ճողվածքների բուժման եղանակներին: Բժշկարանում առկա է բավական բարդ բաղադրություն ունեցող մեկ այլ՝ «Նշանք տէկպարտիկին, որ օգտէ նասուրին եթէ ժ տարու լինի, որ ուտէ զփտած միսն և սրբէ և շատ օգտութիւն անէ ի հին խոցերն Աստուծով...»<sup>14</sup> բուժամիջոց, որն առաջարկվում է երկար տարիներ չապաքինված վերքերի բուժման համար: Դեղապատրաստման բարդ ընթացքը հանգամանորեն նկարագրելուց հետո Ստեփանոս բժիշկը գրում է. «Ահա դեղ, որ փակած է և չէ գրած ի բժշկարանին, բայց գիտուն մարդիքն իրերաց ուսցնեն և մեր հայրն Ահարոն բժիշկն մեզ էր ուսցել և ես Ստեփանոս և իմ հարազատ եղբայրն Ճօշլին բժիշկն գրեցաք զինքս... և որք օգտիք ի սմանէ և ուսանիք զանհայտ դեղս՝ մեզ և մեր ծնողաց մեղաց թողութիւն խնդրեցէ Աստուծով»<sup>15</sup>:

Ասարի բժշկարանում հանդիպում ենք մի շարք այլ դեղատոմսերի, որոնք նույնպես, պետք է կարծել, վերցված են Ստեփանոսի «Ծաղիկ» բժշկարանից, քանզի այս քաղումներում առկա է Ստեփանոս բժշկի անվան հիշատակումը. «Հապ լուծման և շատ օգտութիւն առնէ զոր ես փորձեցի Ստեփանոս...», «Այլ նշանք լուծման դեղի, զոր ես փորձեցի Ստեփանոս և օգտեց ամեն բազում ջերմնոտաց»<sup>16</sup> և «Այլ նշանք ըռևանդ շինելոյ»<sup>17</sup>: Առանձնակի ուշադրության է արժանի վերջին պատառիկը, ուր Ստեփանոսը տեղեկություններ է տալիս իր մասին. «...եւ աղաչեմ զգիտնականքդ շմեղադրել ինձ մեղուցեալ ծառայի Աստուծոյ Ստեփանոսի վերջնու նվաստ իրիցու հմուտ բժշկական արհեստի, որդի Ահարոն բժշկապետի Ուրհացու, թողցէ տէր զյանցանս իւր»<sup>18</sup>:

Փաստորեն Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» երկում պահպանվել են կորսված «Ծաղիկ» բժշկարանից կարևոր պատառիկներ:

Վերոբերյալ փաստերը հնարավորություն են ստեղծում Ստեփանոս Եդեսացու «Ծաղիկ» բժշկարանը դիտարկել որպես առանձին միավոր հայ միջնադարյան մատենագիր բժշկական ժառանգության մեջ:

Այսուհանդերձ Ասարն իր բժշկարանը գրելիս հիմնական ուղեցույց է ունեցել Ամիրգովլաթ բժշկապետի «Օգուտ բժշկութեան» երկասիրությունը, որի ակնհայտ ապացույցներն են «Գիրք բժշկական արհեստի» գործի մեջ «Օգուտ բժշկութեան» երկից սակավ փոփոխության ենթարկված բազմաթիվ մեջբերումները:

Բերենք մահճաբուժությանն առնչվող մի քանի ծավալուն գուգադրություն.

14 ՄՄ 413, էջ 116ա-116բ:

15 Նույն տեղում, էջ 167բ:

16 ՄՄ 7749, էջ 51ա-51բ:

17 ՄՄ 413, էջ 155բ:

18 ՄՄ 7749, էջ 51բ:



Ամիրդովլաթ Ամասիացի  
Օգոստ բժշկութեան

Գլխացաւութիւն որ ստամոքին  
վատուծութենէն և թոլութենէն և ի  
տաւութենէն լինի

Նշան որ ըստամոքին վատու-  
ծութենէն այն է, որ վաղվնէ անօթի  
լինի ցաւի, և յորժամ քիչ ուտէ ցան  
խաղի և երբ շատ ուտէ պոխարն ի  
գլուխն ելանէ և ցաւի գլուխն:

...էհանան ասէ, թէ որ ստամո-  
քին տաւութիւնն ի սաֆրայէ լինի նա  
վերաբերութիւն տուր այնել և սրբէ  
գտամոքն այս կերպովս. առ քաս-  
նու հունդ և քնոթի հունդ և շահթա-  
նայ և վարդ ժ.ժ. դրամ. զամէնն եփէ  
Գ. լիւր ջրով, և քացախ Բ. լիւր,  
եփէ, որ կէսն մնայ, և առ Գ. լիւր  
շաքար, ի վերայ լից, և տուր ի ժմուն  
ժԵ. դրամ և զայս տիմէտն ի վերայ  
գլուխն դիր:

Առ վարդն և սանտալ և ալա-  
կիայ և հայկաւ և հազագ զամէնն  
ձեծէ և շաղվէ մրտի ջրով և վարդի  
ջրով և տիմէտ արա և դիր ի վերայ  
գլխուն և անօթեց սերկելի ուտէ և Բ.  
նոան ջուրն խմէ՝ օգտէ Աստուծով:

...Մասրնուլէն ասէ, թէ ստամո-  
քին վատուծութիւնն ի կերակուր  
չհալելուն լինի՝ նա տուր զխնձորին  
նուարիշն այս կերպովս. առ քաղցր  
և թթու խնձոր հասուն և կեղևած և  
մէջն հանած՝ Ա. լիւր գինով եփէ և

Ասար Սեբաստացի  
Գիրք բժշկական արհեստի

Գլխացաւութիւն որ ի ստամո-  
քին վատութենէն լինի

Նշանն այն է, որ վաղվնէն երբ  
անօթի լինի՝ ցաւի, և երբ քիչ մի հաց  
ուտէ՝ չցաւի, և երբ շատ ուտէ՝ բու-  
խարն ի գլուխն ելնէ՝ ցաւի:

էհաննա ասէ, թէ գլխացաւու-  
թիւն որ ի ստամոքին տաւութենէն  
լինի և կամ ի սաֆրայէ, նա վերա-  
բերութիւն տուր այնել և սրբէ  
գտամոքն այս կերպես. Առ քաս-  
նու հունդ և քնոթի և շահթարայ չոր  
և վարդ ժ.ժ. դրամ, զամէնդ եփէ Գ.  
լիւր ջրով և Բ. լիւր քացախով, մինչև  
կէսն մնա. և առ Գ. լիւր շաքար լից  
ի վրա և տուր ժմուն ժԳ. դրամ: Եւ  
արա զայս տիմէտս և ի վրայ գլխոյն  
դիր:

Առ վարդ և սանդալ և աղա-  
դիայ և հայ կաւ և հազագ աղայ և  
շաղվէ մրտի ջրով և գլխուն վրայ  
դիր: Եւ թող ուտէ քաղցր և թրթու  
նոտն և զոխով ապուր և սրբնու-  
պին տուր և սրբէ գտամոքն ի սաֆ-  
րայէ և կակղացոյ զփորն և արա  
զինչ որ տաւութեան ըստածումն է:

...Մասրնուլէն ասէ, թէ ստամո-  
քին վատուծութիւնն, որ ի կերակուր  
չըհալելուն լինի՝ տուր զխնձորին  
նուարիշն: որ է այս: Առ քաղցր  
խնձոր և թրթու զհասունն և կեղէն  
զմէջն հան և առ ա. լիւր և գինով

Ա. լիար մեղր խառնէ և եփէ, որ կապի, և առ պղպեղ և տարա պղպեղ և զարանֆուլ և սունպուլ Բ. Բ. դրամ, զամէնն ձեծէ և մաղէ և խառնէ ի մեղրն և եփէ, որ կապի և լից ի վերայ մարմարիոնի սայլին որ տափկի և կտրատէ և տուր ժմուն Գ. դրամ և զստամոֆն զօրացնէ և զկերակուրն հալէ և զղեղն ուժովցնէ և զստամոֆին զթուլութիւն և զվատուժութիւն տանի: Եւ այս ի յաղէկ նուարիշներուն է: Եւ նուարիշ յօտն այլ օգտէ այս ցաւուս կամօֆն Աստուծոյ, Ամէն:

(ՄՄ 414, ք. 264ք)

*Մահճաբուժութեանն առնչվող նմանօրինակ մի զուգադրութիւն ևս՝ Ամիրզմավլաթի «Օգուտ բժշկութեան» երկից, որն Ասարը սակավ փոփոխութիւններով ներառել է իր բժշկարանի «Վասն տքնութեան» գլխում.*

«Օգուտ բժշկութեան»

Որ ֆուն շի լինի և վասվաս, որ է տֆնութիւն

...Մասնունէն ասէ, թէ լուծէ զփորն դամոն ջրով և վարդի շարապով և պաղ ջուր լից ի գլուխն և մանուշկի և դդմի ապուր, և տուր ազոխի և դդմի ձէթ օժէ ի գլուխն և տուր ազոխի և դդմի ապուր, և տուր հազար, և զինչ որ տաս՝ տուր նշի ձիթով և տուր զմանուշակն սնուցած, և խիարի ձէթն օժէ ի գլուխն, և կաթեցու ի ֆիթն, որ զհնացնէ և ֆուն բերէ: Եւ թէ ի յայս ձիթերս դդմի կուտ, հազարի հունտ խառնես՝ ուժով լինայ և բնաւ զֆաֆուրն ի գործ մի արկաներ, այնոր համար որ չորութիւն յաւելցնէ և զֆունն տանի:

Ստացումն որ ի հով լինի:

եփէ, և առ մեղր ա. լիար և խառնէ և եփէ, որ կապի, և առ պղպեղ և տարի պղպեղ և զարանֆուլ և սունպուլ Բ. Բ. դրամ, աղա և մաղէ և ի մեղրն լից և եփէ, որ կապի և լից ի վրայ մարմարիոնի սայլի և կտրատէ, և տուր ժմուն Գ. դրամ, զստամոֆն զօրացնէ և զկերակուրն հալէ և զստամոֆին վատուժութիւնն և զթուլութիւնն տանի և զղեղն ուժովցնէ, խիստ շատ օգտէ: Եւ այլ նուարիշի կուտն օգտէ:

(Վիեն. 287, ք. 3ա-3բ)

«Գիրք բժշկական արհեստի»

Վասն տֆնութեան

...Մասնունուան ասէ, թէ լուծէ զփորն դամոն ջրով և վարդի շարապով և մանուշակի, և օժէ ի գլուխն դդմի ձէթ և տուր ազոխով և դդմով ապուր, և զամենայն որ տաս՝ նշի ձիթով տուր և խիարի կտի ձէթ օժէ ի գլուխն, և ֆիթն կաթեցոյ որ զհնացնէ և ֆուն բերէ: Եւ բնաւ զֆաֆուրն ի գործ մի արկաներ զի չորութիւն կու յաւելցնէ, զֆունն կու տանի:

էհանան ասէ, թէ յառաջն ասփրիմներուն շուրն տուր և զանձն լվայ, և թէ խաշխաշի կեղև և պապունան և աֆլըմէլիֆ եփես ջրով և վաղն և իրիկունն ի վերայ գլխուն լնուն որ զղեղն ուժովցնէ, և մանուշկի և նոնաֆարի և դոմի ձէթ և աղջկմօր կաթն յիրար խառնէ և ի ֆիթն կաթեցու և ի գլուխն օժէ, որ ֆուն լինի և գիհանա ըղեղն և ուժովնայ և անօթեց զարէշուր տուր:

Արհիհանիսն ասէ, թէ բնութիւնն կապ լինի՝ լուծէ հոկնայով և տուր մաշ դդումով եփած և հաւկթի դեղնուց թերխորով, և դալար մանար ձկներ և գինի ջրախառն խմէ, օգտէ Աստուծով:

... Եւ թէ ցան խիստ լինի, այս դեղերն չօգտէ՝ դու տուր ա. կուտ աֆիոն, որ ֆուն բերէ և զայն կերակուրֆն ուտէ, որ զանձն գիհացնէ և հանապագ ի բաղնիս մուտ և շուտ ել, և ամենայն թթուէ և ի աղէ պատրաստ կացիր, որ շուտով օգտէ դեղին զօրութիւնն:

(ՄՄ 414, թ. 270ա)

*Հաջորդիվ ներկայացնում ենք աղբյուրագիտական առումով կարևոր մի զուգահեռություն՝ Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» և Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստն» երկերի «Մեղանխողիս» հիվանդությունը վերաբերող համանուն գլուխներից:*

Ամիրդովլաթ Ամասիացի  
Նշան մանախուլիային, որ ի սավ-  
տայէ դիպի մարդուն  
Եւ Ընօֆուն ասէ, թէ ասացեալ  
է, թէ ի պաղղամէ լինի և ի յարենէ, և

էհաննայ ասէ, թէ երբ ի հովութենէ լինի, յառաջն ասփրիմներուն զշուրն առ և զանձն լվայ, որ թէ խաշխաշի կեղև և պապունան և աֆլըմէլիֆ եփես ջրով և վաղն և երիկունն ի գլուխն լնես, զղեղն ուժովցնէ: Եւ զվերոյ ասած ձիթերն օժ գլուխն: Եւ թէ բնութիւնն կապ լինի՝ լուծէ և տուր մաշ դդումով եփած, և հաւկթի դեղնուց թերխորով, և դալար և մանար ձուկն և գինի ջրախառն և հանապագ ի բաղնիս մտոյ, ապա շոյտ ելնէ, և կերակուր տուր զգիհացնող իրվին և յամենայն աղի և թթու իրվտաց պատրաստ կալ և օգտէ:

Եւ թէ ցան խիստ լինի և այս դեղս չօգտեն, դու տուր ա. կուտ աֆիոն, որ ուտէ և հանապագ աֆիոն հոտայ, որ ֆուն բերէ: Եւ զգիհացնող ձիթերն ի գլուխն և ֆթերն աւժեն:

(Վիեն. 287, թ. 68ա-բ)

Ասար Սեբաստացի  
Վասն մանխուլիային, որ ի սավ-  
տայէ դիպի մարդոյն  
Եւ Ռուբաս բժշկապետն ասա-  
ցել է, թէ պաղղամէ լինի և յարենէ, և

իրաւ է ասացեալ զիր նշանն այս է, որ ի մարդն երբ զկերակորն ուտէ հալել չկարէ, և թէ շատ ուտէ և թէ սակաւ կշտերն ուռչին և քամի անկանի և հետ ի հետ զմարդոյն իմացն տանի: Եւ այնց լինի, որ շհաւատայ, թէ իւր բժշկութիւն լինի և զինք կախարդած գիտենայ կամ դեղած և ոչ բժշկի հաւատայ և ոչ դեղի. և այն գիտենայ, թէ կամ վաղն մեռնի և կամ իրիկունն, և նեղի և տապի և իր զգեոտուկն գայ. ժամ մի թթու լինի և ժամ մի հոտած ձկնահամ, և ժամ մի հանց գիտենայ, թէ արիւնահամ ընդ բերանն ի դուրսէ ի գալ, և ժամ մի այրկան գորութիւն բառնայ իւրմէն: Եւ երբ այս ցաւս դիպի մարդոյն, թէ այրկան և թէ կնոջ պատրաստ լինալ պիտի, որ չի խեղդէ զինքն, և այնի խեղդէ, թէ թողի յիմ կենացս զերծանիմ:

Եւ բժշկապետերն զայս ցաւուս տերն ստամոքսախանկար կոչեն. և երբ այս ցաւս ի լոյս ելնէ մարդոյն քունն վատ գայ և ոստ ընդ ոստ գայ քունն, և երբ լինի զքունն իւր՝ հանց թուենայ, թէ ի մութն տեղ եմ, և այլ թվի, թէ ի բարձր տեղոյ անկել և կամ ի ծովու մէջն կայ և կամ թէ ի նեղ տեղի կայ:

Եւ ասցել է Լնոֆօսն, թէ կայր մարդ մի, որ ինքն ի տանէն ի դուրս չկարէին հանել, և երբ ասէին թէ ել ի տանէտ նա ասէր, թէ ի՞նչ ցեղ ելնեմ, երբ երկինքն վրաս է փլել և զիս ի ներքն է արգիլեր: Եւ այլ ասէ թէ

իրաւ է, զի իւր նշանն այն է, որ երբ մարդն զկերակորն ուտէ, չկարէ հալել, և թէ շատ ուտէ և թէ սակաւ՝ կշտերն ուռչին և քամի անկանի, և հետ ի հետ զմարդոյն յիմացն տանի: Եւ անց լինի, որ չի հաւատայ իւրն բժշկութիւն լինի և զինքն կախարդած գիտենայ կամ դեղած և ոչ բժշկի հաւատայ և ոչ դեղի և այնց գիտենայ թէ կամ վաղն մեռանի կամ երիկունն, և նեղու և տապի: Եւ նեղ իւր զգեոտուկն որ գայ՝ ժամ թթու լինի և ժամ հոտած և ձկնահամ: Եւ ժամ մի հանց գիտենայ, թէ արիւնահամ ընդ բերանն ի դուրսէ ի գալ և ժամ մի այրկան գորութիւնն բառնի յիւրմէն: Եւ յերբ այս ցաւս դիպի մարդոյ թէ այրկան և թէ կնոջ, պատրաստ պիտի ունել, որ զինքն խեղդէ ոչ, վասն զի այնի խեղդի, թէ թողի յիմ կենացս զերծանիմ:

Եւ բժշկապետերն զայս ցաւոյս տերն ստամոքս ասանկար կոչեն: Եւ երբ այս ցաւս ի լոյս ելանէ, մարդոյն քունն վատ գայ և ոստ ընդ ոստ գայ ի քունն և երբ լինի զքունն իր հանց թվենայ թէ մութն տեղ եմ և այլ թվի թէ բարձր տեղաց ի վայր է անկանել, և կամ ի ծովու մէջ կայ և կամ ի նեղ տեղ կայ:

Եւ ասացել է Ռուբաս, թէ մարդ մի կայր, որ զինքն տանեն ի դուրս չկարէին հանել, և երբ ասէին թէ ել ի տանէտ, նա ասէր թէ ինչ ցեղ ելնեմ, երբ երկինքն ի վրաս է փլել, և զիս ի ներքն է ի յարգելել: Եւ այլ ասէ, թէ

այս ցավտ ի պալղամէ լինի, և զարմանան: Բայց չէ զարմանմ, զի առաջին ժամանակին մարդ մի եղեր է այս ցաւուս տէր և ասէին բժշկապետերն, թէ նշանմ տուր այս ցաւուս հարցին, թէ է՞ր չէր խօսել, նայ ասաց, թէ ի՞նչ ցեղ խօսէի, երբ լեզուս ապիկի էր, թէ խօսէի կտարէր, և մարդ մի կայր ի յիմ ժամանակին և կարծէր թէ անգլուխ եմ: Ապա բժշկապետերն նարտար էին, արնինէ սաղաւարտ շինեցին և ի գլուխն դրին և երբ դրին ի գլուխն, որ ծանրացաւ, ապա զիտաց, թէ գլուխ ունիմ: Եւ այդ ամէնտ ի պալղամէ լինի:

(ՄՄ 414, ք. 269ա)

այտ ցավդ ի պալղամէ լինի և զարմանան: Բայց չէ զարմանմ, զի յառաջին ժամանակին մարդ մի եղել այս ցավոյդ տէր, ասէին բժշկապետերն, թէ նշանմ տուր այս ցավոյդ, նա խօսէր ոչ: Երբ ողջայցուցին, թէ չէր խօսել, նա ասաց, թէ ի՞նչ ցեղ խօսէի, երբ լեզուս ապիկի էր, թէ խօսէի կտարէր: Եւ մարդ մի այլ կայր յիմ ժամանակն և կարծէր թէ անգլուխ իմ, բայց բժշկապետերն նարտար էին՝ արնրնէ սաղաւարդ զուգեցին և ի գլուխն եղին, և երբ ի գլուխն ծանրացաւ, ապա զիտաց թէ գլուխ ունիմ: Եւ այդ ամէնըտ ի պալղամէ լինի:

(Վիեն. 287, ք. 79բ-80ա)

Նշյալ զուգադրությունը կարևորվում է նրանով, որ այս քաղումները հավակնում են դառնալ դեռևս անհայտ հայերեն հնագույն ամբողջական բժշկական ձեռագրերի գոյություն իրեղեն ապացույցներ՝ հետևյալ պատճառաբանությամբ: Վերոբերյալ հատվածները ուշագրավ են, մասնավորապես, պատկառելի հնություն կնիք կրող այնպիսի վայելուչ լեզվական պաշարով, որը հարիր չէ ո՛չ Ամիրդովլաթի, ո՛չ էլ Ասարի բժշկարանների «ոամկորէն» լեզվին բնորոշ լեզվապաշարին: Ավելին՝ թե՛ Ամիրդովլաթ Ամասիացին և թե՛ Ասար Սեբաստացին, իրենց սովորության հակառակ, ժամանակի «ոամկորէն» լեզվին բնորոշ կամայական լեզվա-ոճական փոփոխությունների չեն ենթարկել այդ բժշկական միավորները:

Ինչպես տվյալ հատվածի բառամթերքի լեզվա-ոճական քննությամբ հավաստել է Ղ. Հովնանյանը<sup>19</sup>, վերոնշյալը բնորոշ է հայերեն հնագույն ձեռագիր բժշկարանների լեզվական բառամթերքին: Ասել կուզի՝ հավանական է, որ Ասարի՝ Ամիրդովլաթից փոխառած այդ հատվածը հենց Ամիրդովլաթին իր հերթին փոխառել էր մի ավելի վաղ՝ մեզ անհայտ հայերեն ձեռագիր բժշկարանից: Արդյունքում՝ Ասարի փոխառած պատառիկը դառնում է առայժմ անհայտ հայ բժշկական երկի գոյություն ապացույց:

<sup>19</sup> Ղ. Հովնանյան, նշվ. աշխ., մասն Բ., Վիեննա, 1879, էջ 360-361:

Ամփոփելով մեր ասելիքը «Գիրք բժշկական արհեստի» երկի աղբյուրների մասին՝ հավելենք, որ Ասարի բժշկարանի քաղվածային բնույթն ամենևին չի խանգարում այն որպես ինքնուրույն հեղինակային աշխատություն որակելուն, քանզի այլ աղբյուրներից ներմուծված մեջբերումները և քաղումները Սեբաստացին լրացրել է իր բժշկական փորձնական գործընթացում ձեռք բերված գործնական հանձնարարականներով, կիրառական բժշկություն իր սեփական դիտարկումներով և արդյունավետ բուժամիջոցների առաջարկներով, դրանք դարձնելով ավելի կիրառելի ապագա բժիշկների համար. «...կամեցայ զընտիրսն հաւաքել և համառօտն բացայայտել ըստ կարեաց մերում փոքր ի շատէ ի բանից իմաստասիրաց և բժշկական վարդապետացն, և խնամ տանել ցաւագնեալ անձանց առ ի պէտս բժշկութեան»<sup>20</sup>:

DONARA KARAPETYAN

THE WRITTEN SOURCES OF ASAR  
SEBASTATS'IS *BOOK OF MEDICAL ART*

**Key words:** Asar Sebastats'i, Mkhit'ar Herats'i, *Gagik-Het'umean Medical Book*, chief physician Aharon, physician Step'anos, Amirdovlat' Amasiats'i, primary source, *Benefits of Medicine*.

In the multi-genre legacy of the 17th-century Sebastian Armenian physician Asar Sebastats'i, his work entitled *Book of Medical Art* is of special importance. This article is devoted to the identification of its sources.

The article first considers citations from the oldest Armenian *Gagik-Het'umean Medical Book*. The next source is Mkhit'ar Herats'i's *Consolation of Fevers*. It is noteworthy that in addition to the direct quotations from Mkhit'ar Herats'i's medical book, Asar cites another extensive fragment from an unknown work by Herats'i. However, Asar was mainly guided by the work of Amirdovlat' Amasiats'i *The Benefits of Medicine*.

Other citations are from the lost medical book *Tsaghik* by Step'anos, who worked in Edessa in the 13<sup>th</sup> century.

<sup>20</sup> ՄՄ 7749, ք. 35բ:

ДОНАРА КАРАПЕТЯН

**ПИСЬМЕННЫЕ ИСТОЧНИКИ ЛЕЧЕБНИКА АСАРА СЕБАСТАЦИ  
“КНИГА ВРАЧЕБНОГО ИСКУССТВА”**

**Ключевые слова:** Асар Себастаци, Мхитар Гераци, Гагик-Гетумяновский лечебник, врач Степанос, Амирдовлат Амасиаци, первоисточник, “Полезьа медицины”.

В многожанровом письменном наследии севастиийского врача XVII века армянина Асара Себастаци особое место занимает авторский лечебник “Книга врачебного искусства”, выявлению источников которого посвящена данная статья.

В статье рассмотрены цитаты из самого древнего армянского медицинского сборника – “Гагик-Гетумяновского лечебника”. Следующий источник – сочинение ученого врача Мхитара Гераци “Утешение при лихорадках”. Примечательно, что кроме прямых цитат из лечебника Мхитара Гераци в сочинении Асара есть и другие пространные цитаты из Гераци, отсутствующие в “Утешении при лихорадках”. Возможно, они заимствованы из какого-то другого, неизвестного сочинения Гераци. Вместе с тем Асар, работая над своим лечебником, в основном руководствовался сочинением Амирдовлата “Полезьа медицины”.

Следующие наблюдения о цитатах из трудов предшественников относятся к фрагментам из лечебника “Цахик” («Цветок»), составленного эдесским врачом XIII века Степаносом: это отрывки из недошедшего до нас источника.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

### Ազատ Բոզոյան

Անտիոֆի դերը Լևոն Մեծագործի ֆաղափականության մեջ..... 5

### Կարեն Մաթևոսյան

Ռուսի սուլթանության հակաթոռ կաթողիկոս Անանիան ..... 22

### Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները  
հայ-մոնղոլական հարաբերություններում ..... 40

### Էլինա Ղազարյան

Հարավային Կովկասի ֆաղափների դերը տարանցիկ  
առևտրում ըստ Ժ.-ԺԴ. դարերի պարսկական և արաբական  
պատմաաշխարհագրական երկերի ..... 60

### Գեորգի Միրզաբեկյան

1590 թ. Մելիֆ-Արալանլուի օսմանյան հարկացուցակը..... 74

### Հայկազ Հովհաննիսյան

Մատենադարանի Ալ. Երիցյանի արխիվ. «Հյուսիսսփայլ» ամսագրի  
հրատարակման նախապատմությունը..... 83

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### Դավիթ Գևորգյան

Գրիգոր Բ. Վկայասերի նախաձեռնած թարգմանական շարժումը ..... 93

### Դոնարա Կարապետյան

Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» բժշկարանի  
գրավոր աղբյուրները..... 113

### Աննա Օհանջանյան

Դավանանքից դավանաբանական անցնելով. հայ կաթողիկ Հովհաննես Մշեցիև և նրա  
հեղինակած «Բանալի նշմարտութեան» գիրքը (անգլերեն)..... 131



## ԱՐՎԵՍ

### Ավետ Ավետիսյան

«Իսահակի զոհաբերության» պատկերագրական տարբերակները  
հայկական մանրանկարներում..... 166

### Սեդա Մանուկեան

Բոնաշէնի մանրանկարչութեան մի օրինակ (Մատենադարանի ձեռ. 10789)..... 199

### Աննա Արեշատյան

Դիտարկումներ Մակար Եկմայանի և Կոմիտասի դաշնակաձ պատարագի  
մոնոդրիաների մեղեդիական մտածողության շուրջ..... 212

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

### Անի Առաքելյան

Սուլեյման Դարաշամբեցի կատակերգակը և նրա նորահայտ երկերը..... 233

### Լուսինե Թումանյան

Հովհաննես Բրգութենցի գանձերն ու տաղերը ..... 268

### Հասմիկ Կիրակոսյան

Նորահայտ մի փաստաթուղթ Շուշիում ավետարանական ֆարոգիչների  
գործունեության մասին ..... 295

### Միհրան Մինասեան

Մշոյ Ս. Առաքելոց, Մատնավանք և Ս. Յովհաննէս վանքերու թեմական  
գիւղերու, Բասենի ու Թախթի հայկական եկեղեցիներու, վանքերու և  
գերեզմանատուններու անտիպ ցուցակ (1861-1866 թթ.)..... 305

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### Գեորգ Տէր-Վարդանեան

Հայերէն հնատիպ գրքերի ձեռագիր գրառումների և գրադարանային  
նշումների Դիւանի կազմութեան ծրագիրը ..... 321

### Տաթևիկ Մանուկեան, Քնարիկ Սարգսեան

Մաշտոցեան Մատենադարանի հնատիպ գրքերի ձեռագիր և  
գրադարանային նշումները (ընդհանուր պատկեր) ..... 330

**Հերմինէ Գրիգորեան**

Յուցակ կիսաբունի Կիլպէնկեան թանգարանի հայերէն ձեռագրերի ..... 350

**ՔԱՆԱՎԵՃ****Նարինէ Վարդանյան**

«Կանոնագիրք հայոց» ժողովածուի զարգացման պատմությունը. ուսումնասիրություն, թե՞ խեղաթյուրում ..... 377

**ՀԱՂՈՐԴՈՒՄ****Մանեա Էնա Շիրինյան**

Բյուզանդագետների համաշխարհային XXIV համաժողովը ..... 420

**ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ****Նազենի Ղարիբյան**

Վասն կենաց եւ գործոց Նինայի Գարսոյեան (1923-2022) ..... 432

*ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ*

ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ ..... 438

---

## CONTENTS

### HISTORY

#### **Azat Bozoyan**

The Role of Antioch in the Policy  
of Levon the Magnificent .....5

#### **Karen Matevosyan**

Anticatholicos Anania of the Sultanate of Rum .....22

#### **Gagik Danielyan**

Official Correspondence and Diplomatic  
Gifts in the Armenian-Mongol Relations (part 3).....40

#### **Elina Ghazaryan**

The Role of South Caucasian Towns  
in Transit Trade According to the Persian and Arabic  
Historico-Geographical Works of 10<sup>th</sup>-14<sup>th</sup> Centuries.....60

#### **Georgi Mirzabekyan**

The Ottoman Tax Register of Melik-Arslanlu of 1590.....74

#### **Haykaz Hovhannisyan**

Matenadaran, Archive of Al. Yeritsyan: Prehistory  
of the Publication of the Journal “Nortern Lights”.....83

### PHILOLOGY

#### **Davit Gevorgyan**

The Translational Movement Initiated by Grigor II V kayaser.....93

#### **Donara Karapetyan**

The Written Sources of Asar Sebastats‘i’s  
*Book of Medical Art*.....113

#### **Anna Ohanjanyan**

Jumping In and Out of Confessions: The Armenian Catholic Yovhannēs  
of Mush and his Book *Key of Truth*.....131

### ART

#### **Avet Avetisyan**

The Iconographic Versions of *the Sacrifice Of Isaac*  
in Armenian Miniatures.....166

**Seda Manukyan**

A Specimen of the Břnashen Miniature Art..... 199

**Anna Arevshatyan**

Observations on the melodic thinking in  
the monodies of the Liturgy in the arrangements  
by Makar Yekmalian and Komitas..... 212

**PUBLICATIONS****Ani Arakelyan**

Comedian Suleiman Darashabets‘i and  
His Newly Discovered Poems..... 233

**Lusine Tumanyan**

The Litanies and Odes of Yovhannēs Brgut‘Ents‘..... 268

**Hasmik Kirakosyan**

A Recently Discovered Document about the Activity  
of Evangelical Missionaries in Shushi..... 295

**Mihran Minassian**

A Previously Unpublished List of Diocesan Villages of the  
Monasteries of Surp Arakelots in Mush, Madnavank and Surp Hovhannes,  
as well as Armenian Churches, Monasteries and Cemeteries  
of Pasen and Takht (1861–1866)..... 305

**BIBLIOGRAPHY****Georg Ter-Vardanean**

The Program of Composing the Corpus of  
Handwritten Remarks and Library Notes in  
Armenian Early Printed Books..... 321

**Tatevik Manukyan, Knarik Sargsyan**

Handwritten and Library Notes of Early Printed Books  
of Mesrop Mashtots Matenadaran (General Picture)..... 330

**Hermine Grigoryan**

Catalogue of the Armenian Manuscripts of the  
Gulbenkian Museum in Lisbon..... 350

**DISCUSSION****Narine Vardanyan**

History of the Development of the Armenian Book of Canons.

Study or Misrepresentation?.....377

**REPORT****Manea Erna Shirinian**

The XXIV International Congress of Byzantine Studies.....420

**OBITUARY****Nazenie Garibian**

The Life and Work of Nina Garsoïan (1923-2022).....432

## СОДЕРЖАНИЕ

## ИСТОРИЯ

<b>Азат Бозоян</b>	
Роль Антиохии в политике Левона Великого.....	5
<b>Карен Матевосян</b>	
Антикатоликос румского султаната Анания.....	22
<b>Гагик Даниелян</b>	
Официальная переписка и дипломатические дары в армяно-монгольских отношениях (часть 3).....	40
<b>Элина Казарян</b>	
Роль Городов Южного Кавказа в транзитной торговле по данным персидских и арабских историко-географических трудов X-XIV веков.....	60
<b>Георгий Мирзабекян</b>	
Османский налоговый реестр Мелик-Арсланлу 1590 г. ....	74
<b>Айказ Оганесян</b>	
Матенадаран, архив Ал. Ерицяна: Предыстория издания журнала “Северное сияние”.....	83

## ФИЛОЛОГИЯ

<b>Давид Геворгян</b>	
Переводческое движение, начатое Григором II Вкаясером.....	93
<b>Донара Карапетян</b>	
Письменные источники лечебника Асара Себастици “Книга врачебного искусства”.....	113
<b>Анна Оганджян</b>	
Переходя из одной конфессии в другую: армяно-католик Ованес из Муша и его книга «Ключ истины».....	131

## ИСКУССТВО

<b>Авет Аветисян</b>	
Иконографические варианты “Жертвоприношения Исаака” в армянских миниатюрах.....	166
<b>Седа Манукян</b>	
Образчик брнашенской школы миниатюры.....	199
<b>Анна Аревшатян</b>	
Наблюдения над мелодическим стилем монодий литургии в многоголосных обработках Макара Екмаляна и Комитаса.....	212

## ПУБЛИКАЦИИ

### **Ани Аракелян**

Сатирик-комик Сулейман Дарашамбский и его неизвестные стихотворения..... 233

### **Лусине Туманян**

Гандзы и таги Ованеса Бргутенца ..... 268

### **Асмик Киракосян**

Новонайденный документ, описывающий деятельность евангелических миссионеров в Шуши ..... 295

### **Мигран Минасян**

Ранее не публиковавшийся список епархиальных сёл монастырей Сурб Аракелоц, Матнаванк и Сурб Ованес, а также армянских церквей, монастырей и кладбищ Басена и Тахта (1861-1866 гг.)..... 305

## БИБЛИОГРАФИЯ

### **Геворг Тер-Варданян**

Программа составления свода рукописных записей и библиотечных заметок на старопечатных армянских книгах ..... 321

### **Татевик Манукян, Кнарик Саргсян**

Рукописные и библиотечные записи старопечатных книг Матенадарана им. Месропа Маштоца (общая картина)..... 330

### **Эрмине Григорян**

Каталог армянских рукописей, хранящихся в музее Гюльбенкяна в Лиссабоне ..... 350

## ДИСКУССИЯ

### **Нарине Варданян**

История развития “Армянской Книги канонов”. Исследование или искажение фактов? ..... 377

## СООБЩЕНИЕ

### **Манеа Эрна Ширинян**

XXIV всемирный конгресс византинистов ..... 420

## НЕКРОЛОГ

### **Назени Гарибян**

Жизнь и деятельность Нины Гарсоян (1923-2022)..... 432

**ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**Հատոր 34**

**BULLETIN OF MATENADARAN**

**Volume 34**

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**

**Том 34**

Համակարգչային ձևավորումը և էչադրումը՝ Անահիտ Խանգադյանի  
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի  
Շապիկին՝  
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան  
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 28

տպամանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

[publishing.matenadaran@gmail.com](mailto:publishing.matenadaran@gmail.com)

Ամսագրի քվային տարբերակը՝

[banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/](http://banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/)